ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՔՆԱՐԻԿ ՆԵՐՍԵՍԻ

# ԱՆՁԻ ՆԵՐԸՆՏԱՆԵԿԱՆ ԶՈՀԱՅՆԱՑՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԹ.00.01 - «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2023**

---

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ ИМЕНИ ХАЧАТУРА АБОВЯНА

АРАКЕЛЯН КНАРИК НЕРСЕСОВНА

# ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ВНУТРИСЕМЕЙНОЙ ВИКТИМИЗАЦИИ ЛИЧНОСТИ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 – общая психология, теория и история психологии, психология личности

**АВТОРЕФЕРАТ**

**ЕРЕВАН 2023**

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

**Գիտական ղեկավար՝** հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Ալլա Վադիմի Շաբոլտաս**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Ասյա Սուրենի Բերբերյան**

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Նատալիա Լվովի Մոսկվիչովա**

**Առաջատար կազմակերպություն՝** Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023թ. սեպտեմբերի 7-ին՝ ժամը 12:00-ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023թ. հուլիսի 22-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Կամո Երեմի Վարդանյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Հիմնախնդրի արդիականությունը:** Ժամանակակից աշխարհում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխությունները, կյանքի լարված տեմպը, տարաբնույթ սթրեսներն ու ֆրուստրացիաները մարդուն մղում են համապատասխան ադապտատիվ վարք դրսևորելու անհրաժեշտության, սակայն բոլորը չեն, որ օժտված են սոցիալ-հոգեբանական օբյեկտիվ հակազդմամբ, առավելապես եթե նման դեստրուկտիվ ազդեցության տակ հայտնվում է ընտանիքը, ապա դրա անդամները կանգնում են լուրջ ճգնաժամի առջև: Ընտանեկան բռնությունները, ամուսնալուծությունները, զոհայնացումն այն արդյունքներն են, որ դրսևորվում են նման ազդեցությունների դեպքում: Պետք է նշել, որ զոհայնացման երևույթը տվյալ դեպքում դրսևորում է ահագնացող բնույթ և ներխուժում ընտանիք:

Ինչպես փաստում են գիտական ուսումնասիրությունները, հոգեպարար ընտանեկան միջավայրը մեծ ազդեցություն ունի անձի հոգեկան զարգացման, միջսերնդային և ազգային արժեքների փոխանցման, անձի սոցիալականացման և արդյունավետ գործունեության վրա: Այդ է պատճառը, որ խիստ հրատապ է դառնում ընտանեկան զոհայնացման համապարփակ ուսումնասիրությունը և կանխարգելման ուղիների մշակումը, որին էլ նվիրված է սույն գիտական աշխատանքը:

**Հետազոտության նպատակն է** անբարենպաստ ընտանիքիների անչափահասների զոհայնացման և զոհային վարքի հակվածության ներընտանեկան և հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

**Հետազոտության վարկածը:** Ենթադրվում է, որ անբարենպաստ ընտանիքների անչափահասների զոհային վարքի դրսևորման հակվածությունը պայմանավորված է անձի որոշակի հոգեբանական և ներընտանեկան անբարենպաստության առանձնահատկություններով:

*Մասնավոր ենթավարկած 1.* Ենթադրվում է, որ զոհային վարքի դրսևորման բարձր մակարդակ կունենան երկու սեռի ներկայացուցիչներն էլ՝ պայմանավորված տրավմատիկ մանկական փորձի (բռնության անհատական անմիջական ապրումը կամ բռնության ականատես լինելը) առկայությամբ և դրա բարդության աստիճանով, ինչպես նաև ծնող-երեխա ոչ բարենպաստ հարաբերություններով: Մասնավորապես, ենթադրվում է, որ անբարենպաստ ընտանիքիների անչափահասներին բնորոշ կլինի առավելապես իրացված զոհայնության բարձր մակարդակը:

*Մասնավոր ենթավարկած 2.* Ենթադրվում է, որ անբարենպաստ ընտանիքիների անչափահասների կողմից այս կամ այն տեսակի զոհային վարքի դրսևորման հակվածությունն ունի գենդերային տարբերություններ. այն է՝ իգական սեռի ներկայացուցիչներին բնորոշ է վարքի պասիվ տեսակը, իսկ արական սեռի ներկայացուցիչներին՝ ակտիվ տեսակը:

**Հետազոտության խնդիրները:** Աշխատանքում առանձնացված են 4 տեսական և 5 գործնական խնդիրներ.

- անձի զոհայնության և զոհային վարքին վերաբերող հայալեզու, ռուսալեզու և անգլալեզու աղբյուրների (Զոհաբանություն, Քրեաբանություն, Սոցիալական հոգեբանություն) հիմնախնդիրներին առնչվող գիտական աղբյուրների հոգեբանական վերլուծություն,

- «զոհայնություն», «զոհային վարք», «անձի զոհայնացում» հասկացությունների հոգեբանական բովանդակության նույնականացում՝ ռուսալեզու և անգլալեզու գրականության ուսումնասիրման հիման վրա,
- անձի զոհայնության և զոհային վարքի ձևավորման վրա ազդող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների տեսական վերլուծություն,
- ծնողական ընտանիքի անբարենպաստության՝ որպես զոհային վարքի ձևավորմանը և անձի զոհայնացմանը նպաստող հիմնական գործոնի տեսական վերլուծություն,
- անբարենպաստ ընտանիքների անչափահասներին բնորոշ զոհային վարքի տարբեր ձևերի նախատրամադրվածության տեսակի և մակարդակի, ինչպես նաև զոհային վարքի նախատրամադրվածության դրսևորման գենդերային տարբերությունների բացահայտում,
- մանկության տարիներին անչափահաս աղջիկների և տղաների մոտ բռնության փորձի տարածվածության և առանձնահատկությունների բացահայտում ու համեմատական վերլուծություն,
- անչափահաս աղջիկների և տղաների մոտ զոհային վարքի տարբեր ձևերի նախատրամադրվածության և ծնող-երեխա փոխհարաբերությունների առանձնահատկությունների միջև կապերի բացահայտում և համեմատական վերլուծություն,
- անչափահաս աղջիկների և տղաների մոտ զոհային վարքի տարբեր ձևերի նախատրամադրվածության և անձի սուբյեկտիվ վերահսկողության առանձնահատկությունների միջև կապերի բացահայտում և համեմատական վերլուծություն,
- անչափահաս աղջիկների և տղաների մոտ զոհային վարքի տարբեր ձևերի նախատրամադրվածության և անձի առանձնահատկությունների միջև կապերի բացահայտում և համեմատական վերլուծություն:

**Հետազոտության օբյեկտն** անձի զոհային վարքն է, հակվածության մակարդակն ու տեսակը, ռիսկայնության գործոնները:

**Հետազոտության առարկան** անչափահասների վարքի առանձնահատկություններն են, որոնք առնչվում են ընտանեկան անբարենպաստությանը և դաստիարակությանը, ինչպես նաև անհատական-հոգեբանական առանձնահատկություններին, այդ թվում՝ տրավմատիկ փորձին և անձնային բնութագրիչներին:

**Հետազոտության տեսամեթոդական հիմք են** հանդիսացել դետերմինիզմի ընդհանուր հոգեբանական սկզբունքները, գիտակցության և գործունեության միասնությունը՝ որպես անձի ձևավորման հիմք, ինչպես նաև վարքի և անձի ձևավորման հասկացման համակարգային և էկոլոգիական հայեցակարգերը: Ընտանիքը, էկոլոգիական և համակարգային հայեցակարգերի շրջանակներում, անձի ձևավորման առաջնային միջավայրն է՝ ընդհանրապես, և զոհային վարքի ձևավորման համար՝ մասնավորապես: Աշխատանքի համար որպես տեսական հիմք են եղել դասական զոհաբանական մոտեցումները (Լ. Ֆրանկ, Դ. Րիվման, Վ. Ռիբալսկայա, Ա. Ռեպեցկայա, Վ. Տուլյակով, Տ. Վարչուկ, Վ. Պոլուբինսկիյ, Հ. Հենտինգ, Բ. Մենդելսոն և այլք), ընտանիքի, մասնավորապես՝ անբարենպաստ ընտանիքի ուսումնասիրության հայեցակարգային դրույթները (Յու. Անտոնյան, Բ. Ալամազով, Ա. Ելիզարով, Գ. Զայդուլինա, Վ. Կորմշիկով, Ի. Գանիշինա, Վ. Ցելույկո, Ս. Կալինինա, Ս. Արզումանյան և այլք):

**Հետազոտության փուլերը և հետազոտվողների թվաքանակը:**

*Նախապատրաստական փուլ՝ 2014-2015թթ..* ուսումնասիրվել է տեսական և փորձարարական գրականություն, ձևակերպվել են հետազոտության նպատակը, խնդիրները, վարկածը և ընտրվել են համարժեք մեթոդներ:

*Հետազոտական փուլ՝ 2015-2017թթ..* այն ներառում է երկու մաս: Առաջին փուլում իրականացվել է ընտրված երկու մեթոդիկաների՝ զոհային վարքի և անձնային հարցարանի ադապտացիա, երկրորդում՝ իրականացվել է բուն հետազոտությունը:

*Քանակական և որակական վերլուծության փուլ՝ 2017-2018թթ..* իրականացվել է հետազոտական տվյալների որակական և քանակական վերլուծություն:

*Ընդհանրացման փուլ.* շարադրվել և ամփոփվել են հետազոտության արդյունքները, աշխատանքը քննարկվել է տարբեր շահագրգիռ կառույցներում:

Հետազոտական ընտրանքում ներառվել են անբարենպաստ ընտանիքների՝ 15-18 տարեկան 100 անչափահասներ:

**Հետազոտության գործիքակազմը:** Հետազոտության նպատակից, խնդիրներից և վարկածից ելնելով՝ կիրառվել է հետևյալ մեթոդների և մեթոդիկաների համակազմը. գիտական գրականության վերլուծության մեթոդ, Զոհային վարքի դրսևորման հակվածության Օ.Օ. Անդրոնիկովայի մեթոդիկա (2005), Ծնող-երեխա փոխհարաբերություններն անչափահասության տարիքում՝ ծնողը անչափահասի աչքերով մեթոդիկա (2006), Մեծ հնգյակ մեթոդիկա՝ Դ.Պ. Յանիչևի ադապտացված տարբերակը (2006), Անձի սուբյեկտիվ վերահսկողության ուսումնասիրության մեթոդիկա (2002), Մանկական տրավմատիկ փորձի և ընտանեկան անբարենպաստության որոշման հեղինակային հարցարան:

**Ստացված տվյալների հավաստիություն:** Հետազոտության արդյունքում ստացված տվյալների հավաստիությունն ու հուսալիությունը հիմնավորվում է հետազտության նպատակին, խնդիրներին և վարկածին համարժեք մեթոդների ու մեթոդիկաների կիրառմամբ, հետազոտական ընտրանքի անհրաժեշտ քանակով և ներկայացուցչականությամբ, փորձարարական տվյալների որակական ու քանակական վերլուծությունների համադրմամբ: Հետազոտության արդյունքների հավաստիությունը ստուգվել է SPSS statistics18 վիճակագրական ծրագրի միջոցով:

**Հետազոտության գիտական նորույթը**:

1. Առաջին անգամ հայկական, դժվարամատչելի և բարձր ռիսկայնության ընտրանքի վրա իրականացվել է զոհային վարքի խորացված ուսումնասիրություն՝ զոհային վարքի դրսևորման հակվածության ուսումնասիրության մեթոդիկայի կիրառմամբ: Ընդ որում, ընտրանքում ներգրավված անձինք հետազոտության պահին չունեին զոհի հաստատված կարգավիճակ:
2. Աշխատանքում շեշտադրվում է ոչ թե զոհի անձնային առանձնահատկությունների ուսումնասիրությունը, որը հանդիսանում էր նախկինում զոհաբանության ոլորտում իրականացված հայալեզու հետազոտությունների առարկա, այլ զոհային վարքի, մասնավորապես՝ վերջինիս դրսևորման հակվածության տարբեր ձևերի ուսումնասիրությունը:
3. Ստացված արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տվել դուրս բերելու անչափահասների մոտ զոհային վարքի զարգացման անհատական-հոգեբանական և ներընտանեկան ռիսկային գործոններ, ինչպես նաև

անբարենպաստ ընտանիքների անչափահասների մոտ այս կամ այն զոհային վարքի դրսևորման գենդերային տարբերությունները, որոնք ևս մինչ այս չէին առանձնացվել հայալեզու հոգեբանների հետազոտություններում:

**Հետազոտության տեսական նշանակությունը**: Աշխատանքում դիֆերենցացված կերպով ներկայացվել են «զոհայնություն», «զոհային վարք» և «զոհայնացում» հասկացությունները, դուրս են բերվել զոհային վարքի դրսևորման գենդերային առանձնահատկությունները, որոնք նախկինում չեն ուսումնասիրվել հայկական ընտրանքի վրա, դուրս են բերվել հոգեֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական գործոնները, որոնք նպաստում են զոհային վարքի և անձի զոհայնացման ի հայտ գալուն, ինչպես նաև դուրս է բերվել անբարենպաստ ընտանիքների անչափահասների զոհային վարքի ձևավորման կոռելյացիոն մոդելը:

**Հետազոտության գործնական նշանակությունը:** Հետազոտության արդյունքում ստացված տվյալներն ունեն կարևոր կիրառական նշանակություն, քանի որ ներկայումս մենք ավելի հաճախ ենք բախվում այնպիսի իրադրությունների, որոնք հանգեցնում են նրան, որ ռիսկի խմբի ներկայացուցիչներն անխուսափելիորեն դառնում են այս կամ այն զոհային իրադրությունների զոհ (ընտանեկան բռնությունից մինչև մարդկանց թրաֆիքինգ), որոնցից հնարավոր կլիներ նաև խուսափել:

Այս հանգամանքով պայմանավորված՝ առավել սուր է հառնում անձի զոհայնության և զոհային վարքի վաղ կանխարգելման հարցը:

Հետազոտության արդյունքում ստացված տվյալները հնարավորություն են տալիս նույնականացնելու ներընտանեկան և անհատական-հոգեբանական գործոնները՝ ներառյալ անձնային առանձնահատկություններն ու բռնության սուբյեկտիվ ապրման փորձը, որոնք պատճառավորում են այն, որը անբարենպաստ ընտանիքների անչափահասներին դարձնում է զոհայնացման տեսանկյունից խոցելի սոցիալական խումբ: Այս գործոնների դուրսբերումն ու իմացությունը հնարավորություն են ընձեռում կազմելու կանխարգելման համակարգային ծրագրեր և համալիր միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն զոհաբանության տեսանկյունից բնակչության առավել խոցելի խմբերի զոհայնության նվազեցմանը: Ընտանեկան դաստիարակության գործոնները որպես զոհայնության նախադրյալ առանձնացնելը հնարավորություն կընձեռի սահմանել անձի զոհայնացման ռիսկի նվազեցման գիտա-գործնական խորհուրդներ:

**Պաշտպանության ներկայացվող դրույթներ:**

1. Անչափահասների զոհայնության կամ զոհայնացման ձևավորման գործընթացը հնարավոր է և անհրաժեշտ է դիտարկել տարբեր մակարդակներում. իրացված զոհային վարքի դրսևորման նախատրամադրվածության կամ զոհային վարքի դրսևորման հավանականության մակարդակում (հնարավոր զոհային վարքի տեսակների տարբերակմամբ), զոհայնացման մակարդակում՝ զոհային վարքի դրսևորման հինգ տարբեր տեսակների տեսքով (ագրեսիվ տեսակ, ակտիվ կամ ինքնաոչնչացնող տեսակ, նախաձեռնող, պասիվ, ոչ քննադատական):
2. Դուրս է բերվել անբարենպաստ ընտանիքների անչափահասների մոտ զոհային վարքի դրսևորման նախատրամադրվածության գենդերային առանձնահատկությունը: Իգական սեռի ներկայացուցիչներին բնորոշ է

պասիվ տիպի դրսևորումը, իսկ արական սեռի ներկայացուցիչներին՝ ակտիվ տիպը:

3. Անբարենպաստ ընտանիքների անչափահասներին բնորոշ է իրացված զոհայնության բարձր մակարդակը, որն առնչվում է ծնող-երեխա հարաբերությունների առանձնահատկություններին և պատժի հետ չկապված բռնության նախկին փորձի առկայությանը:
4. Անբարենպաստ ընտանիքների անչափահասներին բնորոշ զոհային վարքի տեսակն առնչվում է երեխա-ծնող հարաբերությունների առանձնահատկություններին և դաստիարակության ոճին:
5. Անբարենպաստ ընտանիքների անչափահասների մոտ զոհային վարքի տեսակն առնչվում է անձի սուբյեկտիվ վերահսկողության առանձնահատկություններին, այն է՝ ընդհանուր ինտերնալության, նվաճումների ոլորտում ինտերնալության, միջանձնային հարաբերությունների ոլորտում ինտերնալության առանձնահատկություններին:
6. Հետազոտության արդյունքում դուրս է բերվել, որ անբարենպաստ ընտանիքների անչափահասների անձնային առանձնահատկություններն աննշան դեր են խաղում զոհային վարքի այս կամ այն տեսակը դրսևորելու հակվածության մեջ: Գրեթե բոլոր ուսումնասիրված հարաբերությունները վիճակագրորեն նշանակալի չէին:

**Ատենախոսության փորձաքննությունը**: Աշխատանքի դրույթները ներկայացվել են զեկուցների և հրապարակումների տեսքով՝ ԵՊՀ հիմնադրման 90-ամյակին նվիրված երիտասարդ հոգեբանների գիտաժողով, Երևան, 2008թ., Միջբուհական գիտական-գործնական ինտերնետային-կոնֆերանս իրավական հոգեբանության շրջանակներում, Մոսկվա, 2011թ., Հոգեբանության և իրավաբանության արդի հիմնախնդիրները՝ զոհեր և վկաներ. հետազոտությունից մինչև արդյունավետ պրակտիկա, Սանկտ Պետերբուրգ, 2014.թ, առանձին զեկույցի ձևով ներկայացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում (2017թ., 2021թ.): Հիմնական արդյունքները տպագրվել են հայաստանյան և ռուսաստանյան գիտական պարբերականներում:

**Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը**: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից, որոնք ունեն ենթագլուխներ, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ծավալը 152 էջ է: Աշխատանքում ներկայացված են 14 նկար, 1 գծապատկեր, 10 աղյուսակ, 2 դիագրամ և 5 էջ հավելված: Գրականության ցանկում ներառված է 125 անուն գիտական աղբյուր:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին՝ **«Անձի զոհայնության հիմնախնդիրը որպես ժամանակակից սոցիալական և հոգեբանական գիտությունների ուսումնասիրության օբյեկտ»** գլխում քննարկվում են զոհաբանության առաջացման, զարգացման և ձևավորման պատմությունը, «զոհայնություն» և «զոհայնացում» հասկացությունները, զոհերի դասակարգումն ու զոհային վարքի կանխարգելման հնարավոր ուղիները: Առաջին գլխի առաջին՝ **«Զոհաբանության զարգացումը որպես գիտական ճյուղ՝ տերմինաբանության կայացումն ու զոհայնության և զոհայնացման տեսական ու գործնական հետազոտությունները»** ենթագլխում վերլուծվում են զոհաբանության՝ որպես առանձին գիտակարգի ձևավորման ու կայացման պատմական ուղին, հիմնական մոտեցումներն ու տեսությունները (Հ. Հենտինգ, Բ. Մենդելսոն, Ֆ. Ֆերթհայմեր, Լ. Ֆրանկ, Կ. Միյաձավա, Վ. Ռիբալսկայա, Դ. Րիվման և այլք): Երկրորդ՝ **«Զոհայնության և զոհային վարքի ուսումնասիրման տեսական մոտեցումները»** ենթագլխում ներկայացված են զոհայնության, զոհային վարքի և զոհայնացման սահմանման դասական տեսությունների վերլուծությունը (Լ. Ֆրանկ, Վ. Պոլուբինսկի, Դ. Րիվման, Վ. Կոնովալով, Ա. Ռեպեսկայա, Վ. Տուլյակով, Գ. Շնայդեր, Ա. Մուդրիկ, Տ. Սելլին, Մ. Վոլֆգանգ, Բ. Ռուբակ, Ռ. Մեդոուս, Օ. Անդրոնիկովա և այլք), դրանց առանձնահատկությունները և դասակարգումը: Երրորդ՝ **«Զոհայնության կանխարգելման հիմնական մոտեցումներն ու ուղղությունները»** ենթագլխում ներկայացված են կանխարգելման դասական մոտեցումները (Տ. Վարչուկ, Ն. Տրոֆիմով, Վ. Իվշին, Վ. Կոնովալով, Դ. Ռիվման և այլք), մասնավորապես՝ զոհաբանության ոլորտում առավել մեծ տարածում ունեցող կանախարգելման միջոցները, դրանց կիրառման առանձնահատկությունները, արդյունավետության ցուցիչները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների դերը անձի զոհայնության և զոհային վարքի ձևավորման մեջ»** գլխում ներկայացված են զոհային վարքի և զոհայնության ձևավորմանը նպաստող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, հիմնական տեսությունները, առավել մանրամասն ներկայացվում է ընտանեկան, մասնավորապես՝ անբարենպաստ ընտանիքների ազդեցությունը զոհայնացման ձևավորման և վերջինիս հետագա դրսևորման գործընթացում: Երկրորդ գլխի առաջին՝ **«Անձի զոհայնացմանը և զոհայնության զարգացմանը նպաստող գործոնները»** ենթագլխում ներկայացվում են ռուսալեզու և անգլալեզու գրականության տեսությունները (Ու. Բրոնֆենբրեններ, Ա. Մուդրիկ, Մ. Մկրտումյան, Վ, Կոնովալով, Վ. Կվաշիս, Ա. Լիչկո, Բ. Մենդելսոն, Հ. Հենտինգ, Լ. Վասիլև, Լ. Ֆրնակ. Յու. Անտոնյան, Լ. Մուֆտիկ, Ռ. Մորենո, Ջ. Դուսիչ, Ռ. Ֆլոուեռս և այլք), որոնք անդրադարձ են կատարում անձի զոհայնացմանը նպաստող արտաքին և ներքին, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններին, որոնք անձի հետ ունեն ինչպես անմիջական, այնպես էլ միջնորդավորված կապ: Երկրորդ գլխի երկրորդ՝ **«Ծնողական ընտանիքի անբարենպաստությունը որպես անձի զոհայնացմանը և երեխաների մոտ զոհային վարքի ձևավորմանը նպաստող առանցքային գործոն»** ենթագլխում ներկայացվում են «անբարենպաստ ընտանիք» հասկացության հիմնական սահմանումներն ու տեսությունները (Յու. Անտոնյան, Ս. Արզումանյան, Գ. Զայդուլինա, Բ. Ալամազով, Մ. Կամլոշի, Ջ. Բոուլբի, Է. Էյդեմիլլեր, Ի. Կոն, Վ. Վիգոտսկիյ և այլք), նման ընտանիքներին բնորոշ առանձնահատկություններն ու

դրսևորումները, անձի զոհային վարքի ձևավորման և հետագա զոհայնացման վրա ազդող հիմնական ներընտանեկան անբարենպաստության գործոնները:

Ատենախոսության երրորդ՝ **«Անբարենպաստ ընտանիքների անչափահասների զոհայնության փորձարարական հետազոտության մեթոդական ապահովում»** գլխում ներկայացվում է հետազոտության իրականացման ողջ ընթացքը՝ հետազոտության ծրագիրն ու փուլերը, ընտրանքը, մեթոդները, ստացված արդյունքների վերլուծության մաթեմատիկական-վիճակագրական մեթոդները:

Ատենախոսության չորրորդ՝ **«Անբարենպաստ ընտանիքներում ապրող անչափահասների զոհայնության և զոհային վարքի փորձարարական հետազոտություն»** գլխում ներկայացված են իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությունները, որոնց նշանակալի արդյունքները զետեղված են աղյուսակներում և գծապատկերներում: Չորրորդ գլխի առաջին՝ **«Հետազոտության մասնակիցների ներընտանեկան փոխհարաբերությունների սոցիալ-դեմոգրաֆիական բնութագրիչներն ու առանձնահատկությունները»** ենթագլխում ներկայացված են հեղինակային հարցարանի միջոցով ստացված արդյունքների որակական և քանակական վերլուծությունները: Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, անբարենպաստ ընտանիքների անչափահասներին բնորոշ է այն, որ ճնշող մեծամասնությունը՝ 52%-ը, բնակվում է միայն մեկ ծնողի՝ մոր հետ, կրթական աստիճանը միջին է կամ միջին մասնագիտական: Ինչ վերաբերում է ընտանիքների նյութական ապահովվածությանը, ուշագրավ է այն, որ ընդհանուր ընտրանքին բնորոշ է միջին նյութական կարգավիճակը (ընդհանուր հետազոտվողների 58%-ի համար): Երկու խմբերի համար բնորոշ է այն, որ ծնողների մոտ դիտվում է ալկոհոլի չարաշահում (ընդհանուր հետազոտվողների 74%-ի համար): Ծնողների մոտ առավել հաճախ հանդիպող երկրորդ խնդիրը հոգեկան հիվանդություններն են՝ 14%: Չորրորդ գլխի երկրորդ՝ **«Ներընտանեկան բռնության փորձն ու ընտանիքում դաստիարակության առանձնահատկությունները (հարցարանի տվյալների քանակական և որակական վերլուծություն)»** ենթագլխում ներկայացվում են դաստիարակության այն մեթոդները, որոնք ընդունված են հետազոտվողների ընտանիքներում, ինչպես նաև ենթարկվո՞ւմ են արդյոք բռնության, ինչպե՞ս են հետազոտվողները վերաբերվում բռնությանը, և ի՞նչն է իրենց համար բռնություն: Բավական անսպասելի էին այն արդյունքները, որոնք առնչվում էին այն անձի հետ, ում կողմից անչափահասները պատժվում են. հետազոտվողների 57%-ն ընդհանրապես հրաժարվել է պատասխանել այս հարցին, իսկ 34%-ի համար մայրն է եղել հիմնական պատժողը: Հետազոտվողների 71%-ին բնորոշ է այն, որ վերջիններս ընտանիքում ենթարկվում են բռնության, որը կապ չունի պատժի հետ: Առավել հաճախ հանդիպող բռնության տեսակներից են բարոյական, հոգեբանական բռնությունը (50%-ը) և ֆիզիկական բռնությունը (26%-ը): Անդրադառնալով այն զգացմունքներին, որոնք ի հայտ են գալիս հետազոտական խմբի անդամների մոտ՝ ի պատասխան բռնության, պետք է նշել, որ ծնողների կողմից ճչոցներին, հայհոյանքներին, նվաստացումներին ի պատասխան առաջանում են այնպիսի զգացմունքներ, ինչպիսիք են վրդովմունքը՝ 38%-ի մոտ, անհետանալու ցանկությունը՝ 19%-ի մոտ, զայրույթը՝ 14%-ի մոտ: Ընդհանրացնելով բոլոր ստացված արդյունքների վերլուծությունը՝ կարող ենք ասել, որ ընտրանքը միատարր է իր որակական բնութագրիչների տեսանկյունից, ինչպես նաև ապացուցվում է, որ ընտրանքի ներկայացուցիչներն անբարենպաստ

ընտանիքներից են: Չորրորդ գլխի երրորդ՝ **«Անբարենպաստ ընտանիքներում բնակվող անչափահասների խմբերում հոգեբանական և սոցիալ-հոգեբանական ցուցանիշների համեմատություն»** ենթագլխում ներկայացվում է հարցարանի տվյալների և հետազոտության ընթացքում կիրառված մեթոդիկաների համեմատական վերլուծությունը՝ ելնելով մի քանի ցուցանիշներից, որոնցից այստեղ ներկայացված են աշխատանքի համար առավել նշանակալիները: «Դեռահասության տարիքում ծնող-երեխա հարաբերությունների» մեթոդիկայի՝ տղաների և աղջիկների՝ վիճակագրորեն նշանակալի տարբերությունների վերլուծության համաձայն բացահայտվել է, որ վերջիններս տարբերվում են մի քանի սանդղակներով. *հուզական հեռավորություն*՝ այն ավելի բարձր է իգական սեռի ներկայացուցիչների մոտ (M=20,3, StDev=3.73), քան՝ արական սեռի ներկայացուցիչների (M18,9, StDev=3.38). աղջիկներն ավելի թույլ հուզական կապ ունեն ծնողների հետ, քան տղաները: Նշանակալի տարբերություններ են նկատվում նաև *որոշման ընդունման* սանդղակում. աղջիկների մոտ ավելի բարձր է (M=23,1, StDev=4.10), քան՝ տղաների (M=21, StDev=4.50). աղջիկներն ավելի հաճախ են դառնում որոշումների կայացման մասնակից, քան՝ տղաները: Տղաների և աղջիկների միջև նշանակալի տարբերություններ դիտվում են նաև *խստապահանջության* սանդղակով: Այն առավել բարձր է արտահայտված տղաների մոտ (M=20,2, StDev=3.84). տղաներն ավելի հաճախ են ծնողների կողմից վերահսկվում, նրանց ծնողներն ավելի պահանջկոտ են, քան՝ աղջիկներինը: Վերջիններս ավելի ինքնուրույն են, ավելի քիչ են ենթարկվում ծնողական վերահսկման: Նշանակալի տարբերություններ են դուրս բերվել նաև խրախուսման սանդղակում. այն առավել բարձր է արտահայտված աղջիկների մոտ (M=13, StDev=2.68): Նման արտահայտվածությունը վկայում է այն մասին, որ աղջիկների արարքները ծնողների կողմից ավելի հաճախ են արժանանում դրական գնահատականի, քան՝ տղաների արարքները: Նշանակալի տարբերություններ դուրս են բերվել նաև *ամուսնու/կնոջ հանդեպ բարեհաճության* սանդղակով: Այն առավել բարձր է արտահայտված իգական սեռի ներկայացուցիչների ծնողների մոտ: Կարելի է ենթադրել, որ հենց սրանով է բացատրվում այն փաստը, որ իգական սեռի ներկայացուցիչները որոշումներ կայացնելիս ավելի հաճախ են համագործակցում ծնողների հետ, քան՝ արական սեռի ներկայացուցիչները:

Անձի սուբյեկտիվ վերահսկողության ուսումնասիրության մեթոդիկայի համեմատական վերլուծության արդյունքում նշանակալի տարբերություն դուրս է բերվել միայն մեկ սանդղակով՝ *առողջության ու հիվանդության առնչվող ինտերնալության:* Այն առավել բարձր է արտահայտված աղջիկների մոտ (M=2,4, StDev=1,00). իգական սեռի ներկայացուցիչներն առավել հաճախ են իրենց պատասխանատու համարում սեփական առողջության համար, իրենք իրենց են մեղադրում, եթե հիվանդ են, ենթադրում են, որ իրենց առողջացումը կախված է հենց իրենց գործողություններից, իսկ արական սեռի ներկայացուցիչները հակված են կարծելու, որ իրենց հիվանդություններն ու առողջությունը պատահականության արդյունք են, և իրենց առողջացումը կախված է այլ անձանցից, մասնավորապես՝ բժիշկների գործողություններից:

Զոհային վարքի դրսևորման մեթոդիկայով աղջիկների և տղաների համեմատական վերլուծության արդյունքում դուրս են բերվել հետևյալ նշանակալի տարբերությունները (տե՛ս Աղյուսակ №1). տղաներին բնորոշ է *ինքնավնասող և ինքնակործանարար վարքագծի հակվածությունը* (M=11,1, StDev=1,96). տղաների զոհայնությունը կապված է անձի ակտիվ վարքի հետ, որը կրում է կա՛մ հրահրող,

կա՛մ ինքնավնասող բնույթ: Չենց նման ակտիվությունն էլ հրահրում է զոհային իրադրություններ: Մի փոքր այլ կերպ է աղջիկների մոտ. նրանց բնորոշ է սեփական անվտանգության մասին բարձր հոգատարությունը, սխալներից զերծ մնալու հակվածությունը: Նման հակվածությունը վերջիններիս մոտ կարող է բերել անձնային պասիվության՝ «ավելի լավ է բան չանել, քան սխալվել» սկզբունքով: Նրանց նաև բնորոշ է բարձր տագնապայնությունը, վախերին հակվածությունը:

| **Փոփոխական** | **Արական սեռի ներկայացուցիչ-ների միջին ցուցանիշը** | **Իգական սեռի ներկայացուցիչ-ների միջին ցուցանիշը** | **Նշանակա-լիության աստիճանը, p** |
|---|---|---|---|
| *Ինքնավնասող և ինքնակործանարար վարքագծի հակվածություն* | **11,1** | 9,7 | P < 0,01 |
| *Կախվածության և անօգնական վարքագծի հակվածություն* | 7,9 | **9,1** | P < 0,01 |

*df=68, p**<0.01*

***Աղյուսակ № 1.*** *Զոհային վարքի հակվածության գենդերային առանձնահատկությունները*

Մեկ այլ տարբերություն դուրս է բերվել *կախվածության և անօգնական վարքագծի հակվածության* սանդղակում: Այն առավել բարձր է արտահայտված իգական սեռի ներկայացուցիչների մոտ (M=9,1, StDev=2,29): Այս սանդղակով տարբերություններն արտահայտվում են նրանով, որ իգական սեռի ներկայացուցիչների մոտ գերակշռում է պասիվ զոհային վարքը, որն էլ իր հերթին հանգեցնում է նրան, որ նման վարքով բնորոշվող անձինք չեն հակազդում հանցագործին: Իսկ արական սեռի ներկայացուցիչների համար, որոնց մոտ այս սանդղակն ավելի ցածր արտահայտվածություն ունի, բնորոշ է անկախության, մեկուսացվածության հակվածությունը:

«Մեծ հնգյակ» մեթոդիկայի համեմատական վերլուծության արդյունքում դուրս է բերվել տաբերություն միայն մեկ՝ *ինքնագիտակցության, կազմակերպվածության, բարեխղճության* սանդղակով: Այն առավել բարձր է արտահայտված իգական սեռի ներկայացուցիչների մոտ (M=25,5, StDev=4,25): Նման արդյունքները վկայում են այն մասին, որ իգական սեռի ներկայացուցիչներն ավելի պատրաստված են, կազմակերպված, իրենց վարքում ու գործողություններում հստակ հետևում են կանոններին, կարգապահ են, ավելի առույգ են, իրենց որոշումները ծանրութեթև են անում և ավելի պահանջկոտ են սեփական անձի հանդեպ: Իսկ արական սեռի ներկայացուցիչներն ավելի սպոնտան են, քիչ կազմակերպված, ավելի հաճախ են շրջանցում, խախտում ընդունված կանոնները, շտապողական են իրենց որոշումներում, քիչ կենտրոնացած: Անձնային մյուս առանձնահատկությունների համեմատական վերլուծությունները ցույց տվեցին, որ վերջիններս թե՛ տղաների, թե՛ աղջիկների մոտ ունեն շատ ցածր, ցածր կամ միջինից ցածր արտահայտվածություն:

Աշխատանքի համար նշանակալի արդյունք է ներկայացնում նաև միջինների համեմատությունը՝ նախկինում բռնության ենթարկվելու սանդղակի հիման վրա: Առավել նշանակալի էր այն, որ խմբերում վիճակագրորեն նշանակալի տարբերություն դուրս է բերվել *իրացված զոհայնության* սանդղակով (տե՛ս Աղյուսակ № 2): Այն առավել բարձր է արտահայտված այն խմբում, որում անչափահասները ենթարկվում են պատժի հետ կապ չունեցող բռնության (M=7,31, StDev=2.94): Սա խոսում է այն մասին, որ վերջիններս բավական հաճախ են հայտնվում կյանքի և առողջության համար վտանգավոր կամ տհաճ իրադրություններում: Վերջինիս պատճառ են հաճախ ագրեսիվ, չմտածված, սպոնտան բնույթի վարք ցուցաբերելու ներքին նախատրամադրվածությունը և պատրաստակամությունը, ինչն անխուսափելիորեն հանգեցնում է զոհայնացման:

| **Փոփոխա-կան** | **Պատժի հետ կապ չունեցող բռնության ենթարկված հետազոտվող-ների մոտ միջին ցուցանիշը** | **Պատժի հետ կապ չունեցող բռնության չենթարկված հետազոտվողների մոտ միջին ցուցանիշը** | **Նշանակալիության աստիճանը, p** |
|---|---|---|---|
| *Իրացված զոհայնության սանդղակ* | **7,31** | 5,65 | P < 0,05 |

*df=68, p**<0.05*

***Աղյուսակ № 2****. Զոհային վարքի հակվածությունը և պատժի հետ կապ չունեցող բռնության փորձի միջին արժեքների համեմամտություն*

Չորրորդ գլխի չորրորդ՝ **«Ներընտանեկան և անձնային առանձնահատկությունների կապը զոհային վարքի հակվածության հետ»** ենթագլխում ներկայացվում են իրականացված կորելյացիոն վերլուծության արդյունքները: Այն իրականացվել է հետևյալ սկզբունքով (տե՛ս Նկար №1): Զոհային վարքի հակվածության և ծնող-երեխա փոխհարաբերությունների մեթոդիկաների արդյունքների կորելյացիոն վերլուծությունը ցույց է տվել, որ սանդղակների միջև առկա են ինչպես դրական, այնպես էլ բացասական նշանակալի կապեր:

Մասնավորապես, *դրական կորելյացիոն կապ է բացահայտվել ավտորիտարության և իրացված զոհայնության, ինչպես նաև կախյալ և անօգնական վարքի միջև*: Այս արդյունքը խոսում է այն մասին, որ որքան ավելի շատ է ընտանիքում արտահայտված ծնողների կողմից ավտորիտարությունը, այնքան ավելի մեծ է անօգնական և կախյալ վարքի հակվածությունը, այնքան ավելի բարձր է արտահայտված իրացված զոհայնությունը:




***Նկար №1.*** *Հետազոտական մեթոդիկաների սանդղակների կորելյացիոն վերլուծության գծապատկեր*

Մասնավորապես, *դրական կորելյացիոն կապ է բացահայտվել ավտորիտարության և իրացված զոհայնության, ինչպես նաև կախյալ և անօգնական վարքի միջև*: Այս արդյունքը խոսում է այն մասին, որ որքան ավելի շատ է ընտանիքում արտահայտված ծնողների կողմից ավտորիտարությունը, այնքան ավելի մեծ է անօգնական և կախյալ վարքի հակվածությունը, այնքան ավելի բարձր է արտահայտված իրացված զոհայնությունը: Դրական նշանակալի կապ է դուրս բերվել *ծնողի անվստահության և իրացված զոհայնության, ինչպես նաև կախյալ և անօգնական վարքի միջև*: Այս կապը վկայում է այն մասին, որ որքան երեխաների հետ հարաբերություններում ծնողների մոտ ավելի բարձր է դաստիարակության ճիշտ լինելու կասկածը, այնքան անչափահասների մոտ ավելի բարձր է իրացված զոհայնությունն ու կախյալ և անօգնական վարքի դրսևորման հակվածությունը: Նշանակալի դրական կապ է դուրս բերվել նաև *ծնողի անհետևողականության և իրացված զոհայնության, ինչպես նաև կախյալ և անօգնական վարքի միջև*: Այս կապը վկայում է այն մասին, որ երեխաների հետ հարաբերություններում ծնողների կողմից դրսևորվող դաստիարակչական մեթոդների փոփոխականությունն ու անհետևողականությունը որքան վառ է արտահայտված, այնքան ավելի բարձր է երեխաների իրացված զոհայնությունն ու կախյալ և անօգնական վարքի դրսևորման հակվածությունը:

*Բացասական կորելյացիոն* կապեր են դուրս բերվել *հարբերություններից բավարարվածության, երեխայի պահանջմունքների բավարարման և իրացված զոհայնության, ագրեսիվ զոհային վարքի հակվածության, ինչպես նաև կախյալ և անօգնական վարքի միջև*: Այս կորելյացիոն կապերը արտացոլում են այն փաստը, որ որքան ցածր է երեխան գնահատում ծնողների հետ հարաբերությունների որակը, որքան ավելի քիչ է պահանջմունքների՝ ուշադրության, տեղեկացվածության

բավարարումը, այնքան ավելի բարձր են արտահայտվում զոհային վարքին բնորոշ առանձնահատկությունները: Նշանակալի բացասական կորելյացիոն կապեր դուրս են բերվել նաև *էմպատիայի և իրացված զոհայնության, ինչպես նաև կախյալ և անօգնական վարքի միջև.* որքան ծնողներն ավելի քիչ են ընկալում ու հասկանում անչափահասների զգացմունքները և ապրումները, այնքան ավելի բարձր են արտահայտվում զոհային վարքի հակվածությունները: Նման բացասական նշանակալի կապ դուրս է բերվել նաև *մոնիթորինգի և իրացված զոհայնության, ագրեսիվ զոհային վարքի հակվածության, ինչպես նաև կախյալ և անօգնական վարքի միջև:* Համաձայն այս կապի՝ որքան ցածր է ծնողների տեղեկացվածությունն անչափահասի գործերով և հետաքրքրություններով, այնքան ավելի վառ է վերջինիս մոտ արտահայտվում իրացված զոհայնությունն ու կախյալ և անօգնական վարքի դրսևորման հակվածությունը: Եվ վերջին սանդղակը, որի հետ դուրս է բերվել նշանակալի կապ, *ընդունման սանդղակի և կախյալ ու անօգնական վարքի հակվածության սանդղակն է:* Սա նշանակում է, որ որքան ծնողը քիչ է սեր ու ուշադրություն ցուցաբերում անչափահասի հանդեպ, այնքան ավելի բարձր է լինում վերջինիս՝ տարաբնույթ զոհային իրադրություններում կախյալ ու անօգնական վարքի դրսևորման հակվածությունը:

Զոհային վարքի հակվածության և սուբյեկտիվ վերահսկողության մակարդակի ուսումնասիրման մեթոդիկաների կորելյացիոն վերլուծության արդյունքներից ընտրվել են նրանք, որոնք առավելագույն կապեր ունեն: Մասնավորապես՝ բացասական կորելյացիոն կապերի վերլուծության արդյունքնում դուրս է բերվել, որ առկա են նշանակալի կապեր *առողջության/հիվանդության ինտերնալության և ագրեսիվ վարքի հակվածության, ինքնավնասող և ինքնաքայքայող վարքի հակվածության, ոչ քննադատական վարքի միջև:* Ինչպես նաև նշանակալի բացասական կապեր են դուրս բերվել *ընդհանուր ինտերնալության և ինքնավնասող և ինքնաքայքայող վարքի հակվածության, կախյալ ու անօգնական վարքի հակվածության և իրացված զոհայնության միջև:* Ստացված արդյունքները խոսում են այն մասին, որ որքան անչափահասի մոտ ցածր է անձնային պատասխանատվության զգացումը սեփական անձի և առողջության հանդեպ, այնքան ավելի բարձր է նրա՝ ինքնավնասող և ինքնաքայքայող վարքի հակվածությունը: Նման ինտերնալության արդյունքում անձինք ավելի հաճախ են ցուցաբերում ագրեսիվ վարք, որի արդյունքում հայտնվում են այնպիսի իրադրություններում, որոնք վտանգավոր և տհաճ են կյանքի ու առողջության համար: Նրանց բնորոշ է, որ հրահրում կամ ստեղծում են կոնֆլիկտային իրադրություններ, որոնցում էլ դրսևորվում է զոհային վարքը: Վերը նշված՝ ոչ քննադատական վարքի և առողջության ոլորտում ինտերնալության կապը վկայում է այն մասին, որ անչափահասները կարծում են, որ առողջությունն ու հիվանդությունը պատահականության արդյունք են, և հույս ունեն, որ առողջացումը պայմանավորված է այլ մարդկանցով, այդ իսկ պատճառով նրանց մոտ ավելի վառ է արտահայտված ոչ քննադատական վարքը: Նրանց բնորոշ է անզգուշությունը, անփութությունը, կյանքի իրավիճակները ճիշտ գնահատելու անկարողությունը: Վիճակագրորեն նշանակալի արդյունքներ են ստացվել *ընդհանուր ինտերնալության և կախյալ ու անօգնական վարքի հակվածության սանդղակների* կորելյացիոն վերլուծության արդյունքում: Բացահայտված բացասական կապը վկայում է այն մասին, որ սուբյեկտիվ վերահսկման ցածր մակարդակի հետևանքով անչափահասը չի կարողանում տեսնել այն կապը, որն առկա է իր գործողությունների և իր համար նշանակալի իրադարձությունների միջև, ինչն էլ հիմք է այնպիսի

պատկերացումների ձևավորման, ինչպիսիք են՝ «իրադարձությունների մեծամասնությունը կա՛մ պատահականության արդյունք է, կա՛մ պայմանավորված է այլ անձանց գործողություններով»: Նման անձինք հակված են կախյալ վարքի դրսևորմանը, զիջողականությանը, արդարացնում են այլ անձանց ագրեսիան, ինչպես նաև հակված են բոլորին ներել: Նման հակվածությունն ավելի բնորոշ է իգական սեռի ներկայացուցիչներին:

Բացասական նշանակալի կապ հաստատվել է նաև *ձեռքբերումների ոլորտում ինտերնալության ու միջանձնային հարաբերություններում ինտերնալության սանդղակների և իրացված զոհայնության, ինչպես նաև կախյալ և անօգնական վարքի միջև:* Ինտերնալության այդ ոլորտներում ցածր մակարդակ ունեցող անձինք ավելի հակված են իրենց հաջողությունները, ձեռքբերումներն ու ուրախությունները վերագրելու արտաքին հանգամանքներին՝ հաջողություն, բախտի կամ այլ մարդկանց օգնություն, ինչպես նաև նրանք չեն կարծում, որ կարող են ինքնուրույն ձևավորվել հարաբերություններ, հակված են դրանք համարել զուգընկերոջ ձեռքբերում: Նման անձնային առանձնահատկությունները հանգեցնում են նրան, որ նման անձինք դառնում են ավելի զոհային: Օրինաչափ էին նաև *ձախողումների ոլորտում ինտերնալության և իրացված զոհայնության, ինչպես նաև կախյալ և անօգնական վարքի միջև* ստացված նշանակալի բասացական կորելյացիոն կապերը: Այս կորելյացիան վկայում է այն մասին, որ անձը բնութագրվում է նրանով, որ ձախողումներն ու բացասական իրադրությունները վերագրում է այլ անձանց կամ համարում անհաջողության արդյունք, ինչն էլ իր հերթին հանգեցնում է նրան, որ զոհային կամ ռիսկային իրավիճակներում վարքը կրում է կախյալ և անօգնական բնույթ ու մեծացնում է զոհայնացման ռիսկը:

Անսպասելի էին այն արդյունքները, որոնք ստացվել էին «Մեծ հնգյակ» անձնային հարցարանի և զոհային վարքի հակվածության մեթոդիկայի կորելյացիոն վերլուծության արդյունքում: Համաձայն ստացված տվյալների՝ նշանակալի կապեր գրեթե դուրս չեն բերվել: Միակ արտահայտված բացասական կապը դուրս է բերվել *անձնային ռեսուրսների և ոչ քննադատական վարքի հակվածության սանդղակների միջև:* Այս կորելյացիան վկայում է այն մասին, որ որքան ավելի լավ են արտահայտված անչափահասի անձնային ռեսուրսները (ինքնակատարելագործման ձգտման առկայություն, նորի որոնում, փորձի և հետաքրքրությունների հարստություն և այլն), այնքան ավելի ցածր է ոչ քննադատական վարքի հակվածությունը: Անձնային բնութագրիչների և զոհային վարքի դրսևորման հակվածության միջև նման քիչ քանակությամբ նշանակալի կորելյացիոն կապերը հաստատում են այն պատկերացումը, որ զոհայնության պատճառականությունը՝ ընդհանրապես, և զոհային վարքը՝ մասնավորապես, ունեն բազմամակարդակ համակարգային բնույթ, որը ներառում է հասարակական, տնտեսական, մակրո և միկրոսոցիալական մակարդակի, ինչպես նաև հոգեբանական և իրադրային գործոնների բնույթ՝ այսպիսով չհանգեցնելով խնդիրը զուտ հոգեբանական կամ ներանձնային գործոններով պայմանավորվածության:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գրականության վերլուծության և հետազոտական արդյունքների որակական ու քանակական վերլուծության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Զոհային վարքի և զոհայնացման ձևավորմանը նպաստող գործոնները բազմաթիվ են՝ տարիք, սեռ, սոցիալ-հոգեբանական և անհատական-հոգեբանական գործոններ, նաև ընտանեկան անբարենպաստությունը՝ որպես զոհայնության և զոհային վարքի ձևավորմանը նպաստող գործոն: Միաժամանակ, երեխայի զարգացման վրա ազդող և ընտանիքին առնչվող գործոնները կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Անձի վրա ազդող օբյեկտիվ գործոններից են ընտանիքի, երեխաների վերահսկողության, ընտանիքի ֆինանսական վիճակի, տնային պայմանների և այլ առանձնահատկություններ: Սուբյեկտիվներին կարող ենք դասել ծնողների կողմից իրենց հիմնական գործառույթների, այդ թվում՝ երեխաների դաստիարակությանն առնչվող գործառույթների ոչ լիարժեք իրացումը, անուշադրությունը երեխաների հետաքրքրությունների հանդեպ, ընտանիքում հակահասարակական հայացքների և մոտեցումների առկայությունը, ընտանիքի անդամների մոտ վատ օրինակների առկայությունը՝ հանցավոր վարքը, կյանքի անբարոյական բնույթը, կռիվները, երեխաների ներգրավումը մուրացկանության և խաղամոլության գործընթացում:
2. Ընտանեկան անբարենպաստությունն ազդում է անձի ձևավորման, այդ թվում՝ զոհայնացման՝ ոչ միայն վաղ տարիքում, այլ նաև նրա զարգացման ողջ ընթացքում: Զոհայնացման պատճառ հանդիսացող գործոնների շարքում կարելի է առանձնացնել այնպիսիք, ինչպիսիք են մոր՝ երեխա չունենալու ցանկությունը, ծնողների անառողջությունը, հակասոցիալական կենսակերպը, ընտանիքում հուզական-հոգեբանական ծանր մթնոլորտը, բժշկական սխալները, ծնողների հուզական սառնությունն ու/կամ անբարոյականությունը, երեխաների հանդեպ գերխնամքը կամ անտարբերությունն ու բարձիթողությունը, ծնողի կորուստը, ընտանիքում կոնֆլիկտային հարաբերությունները, երկրորդ երեխայով պայմանավորված՝ առաջին երեխայի հանդեպ վերաբերմունքի կտրուկ փոփոխությունը, ընտանեկան կառուցվածքի և կապերի խաթարումը, ընտանիքի տեսակը և այլն:
3. Էմպիրիկ վերլուծությունը ցույց է տվել, որ ընտրանքի ներկայացուցիչների գերակշռող մասին բնորոշ է օբյեկտիվ և սուբյեկտիվ ընտանեկան խնդիրների համալիր: Մասնավորապես՝ խնդիրներ, որոնք կապված են մեկ ծնողի՝ հաճախ՝ մոր առկայության, ծնողների կրթվածության ոչ բարձր մակարդակի, ընտանիքի նյութական ապահովվածության խնդիրների հետ, որոնք առավել հաճախ բացասական են գնահատվում արական սեռի անչափահասների կողմից, ծնողների կողմից ալկոհոլի չարաշահումը, հոգեկան խնդիրների առկայությունը, որը նկատվում է առավելապես արական սեռի ներկայացուցիչների ծնողների մոտ: Գենդերային տարբերություն նկատվում է զոհային վարքի նախատրամադրվածության պարագայում. անբարենպաստ ընտանիքների իգական սեռի անչափահասներին բնորոշ է անօգնական ու կախյալ զոհային վարքի

նախատրամադրվածությունը՝ վարքի պասիվ տեսակ, իսկ արական սեռի ներկայացուցիչներին՝ ինքնավնասման ու ինքնաքայքայման՝ վարքի ակտիվ տեսակը: Պատժի հետ կապ չունեցող բռնության ենթարկված անչափահասների խմբին ավելի է բնորոշ իրացված զոհայնության բարձր մակարդակը:

4. Հետազոտվողների 64%-ը պատիժը համարում է բռնություն: Անչափահասների մեծ մասը՝ 71%-ը նշում է նաև այլ տեսակի բռնության առկայության մասին: Մասնավորապես, բարոյական կամ հոգեբանական, ֆիզիկական, սեռական, տնտեսական: Ընդ որում, տղաների մոտ առավելապես նկատվում է ֆիզիկական և բարոյա-հոգեբանական բռնության ենթարկում: Իսկ ինչ վերաբերում է սեռական բռնության ենթարկվելուն, տղաները խուսափում են այդ հարցերին պատասխանելուց: Որպես առավել ընդունելի բռնության ձև՝ հանդիսանում են հայհոյանքներն ու սպառնալիքները, ոչ թե ֆիզիկական բռնությունը:
5. Կորելյացիոն պլեյադայի վերլուծությունը ցույց տվեց, որ կորելյացիոն մատրիցայի կառուցվածքում առավել մեծ դերակատարություն ունեն այնպիսի գործոնների ցուցանիշներ, ինչպիսիք են երեխայի պահանջմունքների բավարարումը և ծնողների հետ հարաբերություններից բավարարվածությունը, ավտորիտարությունը, ծնողի անհետևողականությունն ու անվստահությունը, էմպատիան, ընդունումը, մոնիթորինգը: Հենց վերջիններս էլ երեխաների կախյալ և անօգնական վարքի, ինչպես նաև ագրեսիվ վարքի դրսևորման վրա ունենում են մաքսիմալ ազդեցություն: Առավել քիչ նշանակություն ունեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են որոշումների ընդունումը, երեխայի կերպարի անադեկվատությունը, ավտոնոմությունը: Կորելյացիոն վերլուծությունը նաև ցույց տվեց, որ ծնողական հարաբերություններից առավել կախված են իրացված զոհայնությունը և կախյալ ու անօգնական վարքի հակվածությունը:
6. Ստացված արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ ինտերնալություն-էքստերնալություն գործոններից առավել կախված են իրացված զոհայնությունը և կախյալ ու անօգնական վարքի հակվածությունը: Զոհայնացման հետ նշանակալի կապեր են հայտնաբերվել առողջության շրջանում ինտերնալության ցուցանիշի հետ, որը, սակայն, չունի կապեր վերը նշված գործոնների հետ, ինչը խոսում է այն մասին, որ առողջության նկատմամբ դիրքորոշման ձևավորումը զգալի նվազեցնում է ակտիվ զոհայնության ձևերը, սակայն ոչ մի կերպ չի ազդում պասիվի վրա: Նման միտում նկատվում է նաև ընդհանուր ինտերնալության ոլոտում, որը թույլ է տալիս ենթադրելու, որ ինքնակողմնորոշումը որոշակիորեն նվազեցնում է զոհայնության դրսևորումը: Նշանակալի կապեր են դուրս բերվել նաև ձեռքբերումների և միջանձնային հարաբերությունների, ինչպես նաև անհաջողությունների ինտերնալության ոլորտներում:
7. Զոհային վարքի տարբեր ձևերի նախատրամադրվածության և անձի առանձնահատկությունների միջև կապերը գրեթե բացակայում են: Բացառություն է կազմում ոչ քննադատական վարքի հակվածությունը, ինչը մեծապես կապված է ընդհանրապես անձնական ռեսուրսների մակարդակի նվազման հետ:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ տպագիր աշխատանքներում:**

1. Аракелян К.Н., Шаболтас А. В. «Особенности субъективного контроля и предрасположенности к проявлению виктимного поведения у воспитанников специализированных учреждений», Научный Арцах, № 4(11), 2021, Ереван, Издательство «АРЦАХ», 2021, ст. 260-270
2. Аракелян К.Н. «Роль внешних объективных и социальных факторов в развитии виктимности личности», Вестник Государственного университета имени В. Брюсова 2(57) – Ереван, Лингва, 2021, ст. 234-243
3. Аракелян К.Н. «Особенности проявления насилия и реализованная виктимность у подростков из неблагополучных семей», Научный Арцах, № 2 (9), Ереван, Издательство «АРЦАХ», 2021, ст. 220-229
4. Аракелян К. Н. «Особенности детско-родительских отношений и склонности к проявлению виктимного поведения у подростков, воспитывающихся в социализированных учреждениях», Вестник Государственного университета имени В. Брюсова 2(53) – Ереван, Лингва, 2020, ст. 283–293
5. Аракелян К. Н., Шаболтас А. В. «Гендерные особенности склонности к проявлению виктимного поведения у подростков, проживающих в специализированных учреждениях», Научный Арцах, №2 (5), Ереван, Издательство «АРЦАХ», 2020, ст. 230-237
6. Аракелян К.Н. «Возникновение и развитие виктимологии как науки о поведении жертвы: исторический экскурс», Академия ФСИН России, «Прикладная юридическая психология», г. Рязань, «ПРИЗ», 2016, №1 (34), ст. 70–74
7. Առաքելյան Ք.Ն. «Անձի զոհայնությունը որպես միջառարկայական ուսումնասիրության հիմնախնդիր», Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր (գիտական հոդվածների ժողովածու). - Եր.: «Աստղիկ» հրատ., 2016, էջ. 145–152
8. Аракелян К.Н., Шаболтас А.В. «Внутрисемейные факторы виктимизации личности», Вестник ЮУрГУ, Серия Психология, Том 8, № 1 (2015), ст. 50-55
9. Аракелян К. Н. «Виктимология как отрасль юридической психологии: экскурс в историю возникновения», Сборник тезисов участников межвузовской научно-практической интернет-конференции по юридической психологии. М.: МГППУ, 2011, ст. 4 – 8
10. Առաքելյան Ք.Ն., Հայրապետյան Դ.Ռ. «Զոհաբանությունը որպես գիտության զարգացման արդիական ուղղություն», «Կրթությունը և գիտությունը Արցախում», 3 - 4, 2008, էջ 85–90
11. Առաքելյան Ք.Ն. «Զոհաբանական հետազոտության կազմակերպման մեթոդաբանական խնդիրները», Հոգեբանական հետազոտությունների արդիականացման հիմնական խնդիրները երիտասարդ հոգեբանների գիտաժողովի նյութեր, Երևան, ԵՊՀ հրատ., 2008, էջ 7 – 10
12. Առաքելյան Ք.Ն. «Անցանկալի սեռական հարաբերությունների զոհերի անձնային հոգեբանական առանձնահատկությունները», Հոգեբանությունը և կյանքը, 1 - 2, Երևան, «Զանգակ-97» 2008, էջ 115–120

**АРАКЕЛЯН КНАРИК НЕРСЕСОВНА**
**ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ВНУТРИСЕМЕЙНОЙ ВИКТИМИЗАЦИИ ЛИЧНОСТИ**

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01- «Общая психология, теория и история психологии, психология личности».

Защита диссертации состоится 7-го сентября 2023 года в 12:00 часов на заседании специализированного совета по психологии 064 ВАК-а по присуждению ученых степеней в Армянском Государственном педагогическом Университете имени Хачатура Абовяна по адресу: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца 17.

## РЕЗЮМЕ

**Актуальность настоящего исследования обусловлена следующими обстоятельствами:** во-первых, высокой социальной значимостью проблематики исследования современной семьи и ее влияния на развитие ребенка как первого и базового ресурса межпоколенческой и национальной передачи ценностей, а также позитивной социализации личности. В этой связи, особую актуальность приобретают научные и практические разработки, непосредственно касающиеся наиболее острых внутрисемейных проблем, широко распространенных в современном обществе и которые с высокой вероятностью приводят к виктимизации личности ребенка - домашнее насилие, разводы и воспитание в неполной семье, нездоровые отношения и атмосфера в семье. Во-вторых, несмотря на внушительный накопленный опыт изучения виктимности личности, в психологии проблематика именно внутрисемейной виктимизации мало исследована. Актуальность таких исследований обусловлена обширными практическими наблюдениями, которые свидетельствуют о том, что на формирование виктимного поведения личности ключевое воздействие оказывают внутрисемейные особенности. В-третьих, важно отметить, что данная диссертационная работа представляет собой попытку комплексного исследования виктимности личности, в рамках которого неблагополучные факторы воспитания в родительской семье в совокупности со специфическими личностными особенностями несовершеннолетних рассматриваются как предпосылки формирования и актуализации виктимности и виктимного поведения личности, что позволяет наметить основные направления профилактической работы как с семьей в целом, так и отдельно с родителями и детьми.

**Цель исследования:** изучение внутрисемейных и психологических особенностей предрасположенности к виктимности и виктимному поведению несовершеннолетних из неблагополучных семей.

**Гипотеза исследования:** предполагается, что предрасположенность к проявлению виктимного поведения и ее выраженность среди несовершеннолетних из неблагополучных семей связаны с определенными психологическими особенностями личности и внутрисемейными особенностями неблагополучия, а сама предрасположенность к проявлению того или иного типа виктимного поведения среди несовершеннолетних из неблагополучных семей имеет гендерные различия.

Исходя из поставленной цели и сформулированных гипотез, в диссертационном исследовании решались соответствующие теоретические и эмпирические *задачи*.

**Теоретические задачи: 1)** Психологический анализ современного состояния изучения проблемы виктимности и виктимного поведения личности. **2)** Идентификация психологического содержания терминов «виктимность», «виктимное поведение», «виктимизация личности». **3)** Теоретический анализ объективных и субъективных факторов развития виктимности личности и виктимного поведения.

**Эмпирические задачи: 1)** Выявление уровня и типов предрасположенности несовершеннолетних из неблагополучных семей к виктимному поведению, а также гендерных различий предрасположенности к проявлению виктимного поведения. **2)** Выявление и сравнительный анализ распространённости и специфики опыта насилия, пережитого несовершеннолетними девушками и юношами в детстве. **3)** Выявление и сравнение взаимосвязей особенностей детско-родительских отношений, субъективного контроля личности, личностных особенностей с предрасположенностью к различным формам виктимного поведения у девушек и юношей.

**Научная новизна диссертационной работы: 1)** Научная новизна данной работы состоит в том, что впервые на выборке представителей армянской национальности проводилось углубленное изучение виктимного поведения в одной из самых труднодоступных и уязвимых для виктимизации групп респондентов, которые на момент исследования не имели статуса жертвы преступления против личности, с использованием методики выявления предрасположенности к реализации отдельных форм виктимного поведения. **2)** В данной работе, в первую очередь, акцент делается не на рассмотрении личностных особенностей жертвы, что являлось предметом ранее проведенных армяноязычных исследований в рамках виктимологии, а на рассмотрении виктимного поведения, в частности, предрасположенности к его различным формам. **3)** В результате анализа полученных данных были выявлены значимые индивидуально-психологические и внутрисемейные факторы риска развития виктимного поведения несовершеннолетних, а также гендерные различия в проявлении того или иного типа виктимного поведения у несовершеннолетних из неблагополучных семей, которые ранее не выделялись в армяноязычных исследованиях психологов.

**Теоретическая значимость диссертационного исследования:** дифференцировано содержание понятий «виктимность», «виктимное поведение» и «виктимизация». Выявлены гендерные особенности проявления виктимного поведения несовершеннолетних из неблагополучных семей. Данные о гендерных различиях в детерминации виктимности личности и проявлениях виктимного поведения девушек и юношей ранее не были изучены среди представителей армянской выборки. Выявлен комплекс факторов психофизиологического, индивидуально-психологического и социально-психологического генеза, способствующих возникновению виктимного поведения и виктимности личности у несовершеннолетних из неблагополучных семей. Выделена корреляционная модель формирования виктимного поведения несовершеннолетних из неблагополучных семей.

**Практическая значимость исследования:** полученные данные дают возможность идентифицировать те внутрисемейные и индивидуально-психологические факторы, включая личностные особенности и субъективный опыт переживания насилия, которые детерминируют то, что делает несовершеннолетних из неблагополучных семей наиболее уязвимой для виктимизации социальной группой. Выявление и знание этих факторов позволят разработать комплексную профилактическую программу и комплекс мероприятий, направленных на снижение уровня виктимности среди представителей уязвимых групп населения. Выделение семейных факторов воспитания как предпосылок виктимности позволит сформировать научно-практические рекомендации для снижения рисков виктимизации личности в процессе семейного воспитания.

**Апробация результатов исследования:** основные теоретические положения и практические результаты исследования были представлены на конференциях и семинарах, а также в Министерстве труда и социальных вопросов РА.

**Структура и объем диссертации:** диссертация состоит из введения, четырех глав, заключения, библиографии и приложения. Работа содержит 152 страниц, 14 рисунков, 1 схему, 10 таблиц, 2 диаграммы и 5 страниц приложений. Библиография включает 125 наименований литературных источников.

**По теме диссертации опубликовано 12 статей.**

**KNARIK NERSES ARAKELYAN**

**PSYCHOLOGICAL FEATURES OF INTRA-FAMILY VICTIMIZATION OF THE PERSON**

Dissertation for pursuing a degree of candidate of psychological sciences in specialty 19.00.01 - General Psychology, Theory and History of Psychology, Psychology of Personality.

The defense of this thesis will take place on September 7, 2023, at 12:00 PM, at the session of Degree Awarding Commission 064 specializing in Psychology of the Higher Attestation Committee of the RA at Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

Address: Tigran Mets Street 17, Yerevan, RA.

**SUMMARY**

**The relevance of this research is determined by the following circumstances:** firstly, the high social significance of the research problems of the modern family and its impact on the development of the child as the first and basic resource for intergenerational and national transfer of values, as well as positive socialization of the individual. In this regard, scientific and practical developments that directly relate to the most acute intra-family problems that are widespread in modern society and which are highly likely to lead to victimization of the child's personality are of particular relevance - domestic violence, divorce and upbringing in single-parent families, unhealthy relationships and atmosphere in family. Secondly, despite the impressive accumulated experience in the study of personality victimization, in psychology the problem of intra-family victimization has been little studied. The relevance of such studies is due to extensive practical observations, which indicate that intra-family features have a key effect on the formation of victim behavior of an individual. Thirdly, it is important to note that this dissertation is an attempt to comprehensively study the victimization of the individual, in which the unfavorable factors of upbringing in the parental family, together with the specific personal characteristics of minors, are considered as prerequisites for the formation and actualization of victimization and victim behavior of the individual, which allows us to outline the main directions of preventive work both with the family as a whole and separately with parents and children.

**The aim of the study**: to study intra-family and psychological characteristics of predisposition to victimization and victim behavior of minors from unfavorable families.

**Research hypotheses:** it is assumed that the predisposition to the manifestation of victim behavior and its severity among minors from unfavorable families are associated with certain psychological characteristics of the individual and intra-family characteristics of distress, also that the predisposition to the manifestation of one or another type of victim behavior among minors from dysfunctional families has gender differences

**Theoretical tasks: 1)** Psychological analysis of the current state of the study of the problem of victimization and victim behavior of a person. **2)** Identification of the psychological content of the terms: "victim", "victim behavior", "personal victimization". **3)** Theoretical analysis of objective and subjective factors in the development of personality victimization and victim behavior.

**Empirical tasks: 1)** Identification of the level and types of the predisposition of minors from dysfunctional families to victim behavior, as well as gender differences in

predisposition to the manifestation of victim behavior. **2)** Identification and comparative analysis of the prevalence and specifics of the experience of violence experienced by underage girls and boys in childhood. **3)** Identification and comparison of the relationship between the characteristics of child-parent relationships, comparison of features of subjective control of personality, and comparative analysis of personality traits with a predisposition to various forms of victim behavior in girls and boys.

**The scientific novelty of the dissertation work: 1)** The scientific novelty of this work lies in the fact that for the first time on a sample of representatives of the Armenian nationality, an in-depth study of victim behavior was carried out in one of the most inaccessible and vulnerable to victimization groups of respondents who at the time of the study did not have the status of a victim of a crime against a person. **2)** First of all, the emphasis is not on the consideration of the personal characteristics of the victim, which was the subject of earlier studies in the Armenian language within the framework of victimology, but on the consideration of victim behavior, in particular, predisposition to its various forms. **3)** As a result of the analysis of the data obtained, significant individual psychological and intra-family risk factors for the development of victim behavior in minors were identified, as well as gender differences in the manifestation of one or another type of victim behavior in minors from dysfunctional families, which were not previously identified in the Armenian-language studies of psychologists.

**The theoretical significance of the dissertation research:** The content of the concepts of "victim", "victim behavior" and "victimization" is differentiated. Gender features of the manifestation of victim behavior of minors from dysfunctional families are revealed. A complex of factors of psycho-physiological, individual-psychological, and socio-psychological genesis, contributing to the emergence of victimization behavior and victimization of personality in minors from dysfunctional families. A correlation model of the formation of victim behavior of minors from dysfunctional families has been identified.

**The practical significance of the study**. The data obtained make it possible to identify those intra-family and individual psychological factors, including personal characteristics and subjective experience of experiencing violence, which determine what makes minors from dysfunctional families the most vulnerable to victimization by a social group. Identification and knowledge of these factors will make it possible to develop a comprehensive preventive program and a set of measures aimed at reducing the level of victimization among representatives of vulnerable groups of the population. Identification of family factors of upbringing as prerequisites for victimization will make it possible to formulate scientific and practical recommendations to reduce the risks of victimization of a person in the process of family upbringing.

**Approbation of the research results:** The main theoretical provisions and practical results of the research were presented at conferences and seminars, at the Ministry of Labor and Social Affairs of the Republic of Armenia.

**The structure and scope of the dissertation.** The dissertation consists of an introduction, four chapters, a conclusion, a bibliography, and an appendix. The work contains 152 pages, 14 figures, 1 diagram, 10 tables, 2 diagrams, and 5 application pages. The bibliography includes 125 titles of literary sources.

**12 articles have been published on the topic of the dissertation.**